ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2020 թվականի N 218 -Ա

«ՏՈԼՈՐՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետով և հիմք ընդունելով Ն.Ղազարյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2020թ. սեպտեմբերի 18-ից լուծել «Տոլորսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Երանուհի Բաղալյանի հետ 2017 թվականի մարտի 3-ին կնքված N 38 աշխատանքային պայմանագիրը գործողության ժամկետը լրանալու պատճառով:

2.Նաիրուհի Ղազարյանին 2020թ. սեպտեմբերի 18-ից նշանակել «Տոլորսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

3.Կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Մարինե Աբգարյան	Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ),
Իննա Բալայան	Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ
Երանուհի Բաղալյան	«Տոլորսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն, հանձնող
Նաիրուհի Ղազարյան	«Տոլորսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար, ընդունող:

2. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

18.09.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. սեպտեմբերի 18
ք. Կապան